



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան

« 09 » 10 2024թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 209 - 24

Նախաձեռնող՝

«ՄԱՔՈՒՐ ԱՎԱԶ 2022» ՍՊԸ

Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ Բարեկամության փ. 14 նրբ փ. 3

Գործունեությունը՝

Նորատուսի ավազի և գլաքարակոպճային  
խառնուրդի հանքավայրի առաջին տեղամասում  
երկրաբանական ուսումնասիրություն

Գեղարքունիքի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 209 - 24

«09» հոկտեմբեր 2024թ.

**Գեղարքունիքի մարզի Նորատուսի ավազի և գլաքարակոպճային խառնուրդի հանքավայրի առաջին տեղամասում երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝	«ՄԱՔՈՒՐ ԱՎԱԶ 2022» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝ փաստաթղթի տեսակը	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակ՝	/Բ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Գեղարքունիքի մարզ, Գավառ համայնք Նորատուս բնակավայր

**Ներածական մաս.** Գեղարքունիքի մարզի Նորատուսի ավազի և գլաքարակոպճային խառնուրդի հանքավայրի առաջին տեղամասում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության տարածքը գտնվում է Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Նորատուս բնակավայրի վարչական տարածքում՝ Սևանա լճի ջրհավաք ավազանի սահմաններում: Սևանա լճից 2.6 կմ, իսկ գավառագետից՝ 46 մ հեռավորությունների վրա և սահմանակից է Սևանա ազգային պարկի տարածքին:

Մոտակա բնակավայրերն են՝ Սարուխան, Լանջաղբյուր, Նորատուս, Երանոս բնակավայրերը: Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքը համայնքային կադաստրային քարտեզներում հաշվառված է որպես գյուղատնտեսական նպատակային նշանակության հող (վարելահող):

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (ՀՕ-150-Ն) 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի ա. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

**Նկարագրական մաս.** Երկրաբանական ուսումնասիրության տեղամասը 8. 077 հա տարածքով եզրագծվում է հետևյալ կողողինատներով (կողողինատները ներկայացված են ARMWGS-84 համակարգով)։









Բնապահպանական միջոցառումների իրականացման համար ընկերության կողմից կհատկացվի 1076.0 հազ. ՀՀ դրամ, որից 132.3 հազ. ՀՀ դրամը՝ տարածքի ռեկուլտիվացիայի համար:

Ըստ ներկայացված հաշվետվության՝ Նորատուսի հանքավայրի առաջին տեղամասում, հարակից Նորատուս բնակավայրում բնության հուշարձաններ հաշվառված չեն, պատմության և մշակույթի հուշարձաններով զբաղեցրած հողերը գտնվում են հայցվող տեղամասից նվազագույնը 0.8 կմ հեռավորության վրա:

Հայցվող տարածքում չեն արձանագրվել նաև ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ:

**Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.**

- տեխնիկայի և ավտոտրանսպորտի լիցքավորումը, յուղերի փոխարինումը, մեքենաների տեխնիկական սպասարկումը կատարվելու է մոտակա Նորատուս բնակավայրում: Դա կբացառի երևակման տարածքի աղտոտումը նավթամթերքներով,
- կենցաղային աղբը նախատեսվում է հավաքել հատուկ պարկերի մեջ՝ հետագայում տեղափոխելով մոտակա աղբահավաք կետեր, պայմանագրային հիմունքներով,
- լեռնատրանսպորտային միջոցների վրա չեզոքացուցիչ սարքերի տեղադրում՝ արտանետումները կրճատելու նպատակով,
- աշխատող մեքենայի շարժիչի կարգավորում՝ աղմուկի մակարդակի կարգավորման և կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցության նվազեցման նպատակով,
- կեղտաջրերի հավաքում հորատից հորում, որի դատարկումն իրականացվելու է հատուկ ծառայության ուժերով՝ պայմանագրային հիմունքներով,
- երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ավարտից հետո ռեկուլտիվացիայի իրականացում,
- իրականացվելու են բուսական և կենդանական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ,
- երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում ճանապարհներից դուրս, տեխնիկայի տեղաշարժի բացառում:

Երկրաբանական ուսումնասիրության ընթացքում իրականացնելու են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ,
- հողային ծածկույթի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ ամսական մեկ անգամ,
- վայրի բնության, կենսամիջավայրի, Կարմիր գրքում ընդգրկված էնդեմիկ տեսակների մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ,
- Գավառագետ գետի ջրերի մշտադիտարկում՝ շաբաթական մեկ անգամ,
- աղմուկի և թրթռման մակարդակի մշտադիտարկումներ՝ տեղամասի տարածքում հորատման աշխատանքների ժամանակ:

Երևակման տարածքում կատարվելիք շրջակա միջավայրի մոնիթորինգի իրականացման համար ընկերությունը նախատեսել է տարեկան 680.0 հազ. ՀՀ դրամ:





**Պատճառաբանական մաս.** Օրենսդրությամբ սահմանված կարգով, փորձաքննության ընթացքում, Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Նորատուս բնակավայրում անցկացված հանրային քննարկման ընթացքում գործունեության իրականացումը տեղական ինքնակառավարման մարմինների և մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովից, կադաստրի կոմիտեից, Գեղարքունիքի մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից:

Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակումներում:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական գործընթացում Գիտությունների ազգային ակադեմիայի Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի կողմից Գեղարքունիքի մարզի Նորատուսի ավազի և գլաքարակոպճային խառնուրդի հանքավայրի առաջին տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ՇՄԱԳ հաշվետվության վերաբերյալ տրվել է դրական կարծիք նշելով, որ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացումը ընդհանուր առմամբ Սևանա լճի և Սևանի ջրահավաք ավազանի վրա էական բնապահպանական ռիսկեր ունենալ չեն կարող, սակայն հետագա արդյունահանման աշխատանքները Սևանա լճի էկոհամակարգի, ջրահավաք ավազանի և լանդշաֆտի վրա կարող են ունենալ էական բնապահպանական ռիսկեր:

Փորձաքննական դրական եզրակացություն տրվում է միայն երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների համար և չի կարող երաշխավորվել հետագա արդյունահանման աշխատանքներին դրական եզրակացության տրամադրումը:

### **Փորձաքննական պահանջներ**

- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ և արդյունքները՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:
- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել գնահատման հաշվետվությունում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:





- Անհրաժեշտ է ապահովել հայտով նախատեսված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազոր մարմին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:
- Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում խստագույնս առաջնորդվել «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով, բացառելով ցանկացած բացասական ազդեցություն Սևանա լճի էկոհամակարգի վրա, ինչպես նաև ՀՀ կառավարության 2005 թ. հունվարի 20-ի «Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձեւավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին» N 64-Ն որոշումով:

**ԵՐԱՓՈՒԿՈՒՄ ԱՍՍ**

«ՄԱՔՈՒՐ ԱՎԱԶ 2022» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Նորատուսի ավազի և գլաքարակոպճային խառնուրդի հանքավայրի առաջին տեղամասում երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝



Կերիբնազ Մկրտչյան

Հովիկ Մեսրոպյան